

Հ. Ղ. ՄԻՐԶՈՅԱՆ, Հովհաննես Մրքուզ Զուղայեցի, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2001, 271 էջ:

Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի պատին գրված է հետևյալ պատգամը. «Յիշեցեք զմեծագործութիւնս նախնաց ձերոց և պահեցեք սրբութեամբ զնա»: Հայ ժողովուրդը դարեր շարունակ անշեղորեն հետևել է այս պատգամին՝ համարելով այն իր գոյության հիմքն ու կյանքի իմաստը: Սկսած Սուրբ Գրքի հիաքանչ թարգմանությունից, մինչև այսօր հայ մարդն իր անխոնջ աշխատանքով, մեծագույն սիրով ու Գլխովածությամբ կերտել է անթիվ-անհամար հոգևոր ու նյութական արժեքներ, որոնցից շատերի մասին մեր ներկա սերունդը կամ ընդհանրապես չունի պատկերացում. կամ եթե ունի, ապա վերին աստիճանի տարտամ ու սահմանափակ: Այդպիսի պատկերացում կար 17-րդ դարի երկրորդ կեսի և 18-րդ դարի առաջին քառորդի ականավոր մտածող, փիլիսոփա, տրամաբան, քերական, գեղանկարիչ, աստվածաբան ու հոետոր Հովհաննես Մրքուզ Զուղայեցու վերաբերյալ: Նշանավոր մատենագիրը, իր վիթխարի տաղանդն անմնացորդ Գլխաբերելով մեր ժողովրդի գոյապահպանության գործին, մինչև իր կյանքի վերջը գրելով ու գործով պայքարել է ներքին ու արտաքին թշնամիների դեմ, առաջդրել այնպիսի գաղափարներ, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց տեսական-ճանաչողական արժեքն ու գործնական նշանակությունը: Մշակութային այդ հզոր գործչի լուսավոր կերպարը և գիտական բազմաբնույթ ժառանգությունը հետազոտելու հաջողված փորձ է կատարել 17-րդ դարի հայոց պատմության, ի մասնավորի՝ մշակույթի և փիլիսոփայության քաջագիտակ երախտավոր, պրոֆեսոր Հրաչիկ Միրզոյանը:

Նրա «Հովհաննես Մրքուզ Զուղայեցի» մենագրությունը, որ լույս է տեսել Գ. Գյուլբենկյան հաստատության հովանավորությամբ, շոշափում է հայոց պատմու-

թյանն ու մշակույթին վերաբերող մի շարք կարևոր հարցեր: Այդ տեսակետից առանձնապես աչքի է ընկնում մենագրության առաջին՝ «Ապրած ժամանակաշրջանը, կյանքը և ժառանգությունը» գլուխը:

Փաստական նյութի հիման վրա հեղինակը ցույց է տալիս, որ իր տեսական մտքի պատմական զարգացման ճանապարհին հայ ժողովուրդը գործուն մասնակցություն է ունեցել ինչպես համաշխարհային նշանակություն ունեցող նյութական ու հոգևոր արժեքների ստեղծման, այնպես էլ այլոց ստեղծածը տեսականորեն յուրացնելու, պահպանելու և զարգացնելու հույժ կարևոր գործընթացում: Հստ այդմ, գրախոսվող մենագրությունը գալիս է մեկ անգամ ևս հաստատելու այն ճշմարտությունը, որ պատմական տարբեր դարաշրջաններում թե մայր հայրենիքում և թե աշխարհի ցանկացած վայրում, որ դժնդակ ճակատագրի բերումով հայտնդվել է հայկական գաղթօջախ, մեր ժողովուրդը հասարակական-քաղաքական ու գիտամշակութային կյանքի բոլոր ասպարեզներում հանդես է բերել ստեղծագործ ոգի, լույսի ու լուսավորության հարատև ձգտում, անասան հավատ առաջադիմության նկատմամբ, միաժամանակ հավատարիմ է մնացել սեփական ակունքներին ու ավանդույթներին:

Հանրահայտ իրողություն է, որ 16-17-րդ դարերում տեղի ունեցած թուրք-իրանական պարբերական ու երկարատև պատերազմները՝ ընթանալով հիմնականում Հայաստանի տարածքում, պատճառ դարձան հայ բնակչության զանգվածային տեղահանությունների, վաչկատուն-մասնեղական ցեղերի էթնիկական էքսպանսիայի, ինչպես նաև քաղաքական ու տղմտեսական կործանարար ցնցումների՝ դրանով իսկ բուն Հայաստանում ըստ էության ի չիք դարձնելով գիտական ու մշակութային կյանքը կամ, լավագույն դեպքում, հասցնելով նվազագույնի: Այդ պա-

րագաներում միակ հույսը մնում էին հայկական գաղթօջախները, ուր գոյություն ունեին կենսագործունեության ու մտավոր կյանքի քիչ թե շատ տանելի պայմաններ: Եվ ահա մեր ժողովրդի տնտեսական, քաղաքական ու մշակութային գործունեության հիմնական կենտրոնը դառնում է Սեֆյան Իրանի հետավոր անկյուններից մեկում հաստատված Նոր Ջուղա գաղթօջախը, որը հայոց պատմության համար ունեցել է բացառիկ նշանակություն: Հենց այստեղ էլ 17-րդ դարում ձևավորվում է մի երևույթ, որը կարելի է բնորոշել «ջուղայեցիություն» համընդգրկուն հասկացությամբ: Իսկ դա նշանակում է, ինչպես համոզիչ կերպով ապացուցում է Հ. Միրզոյանը, որ հիշյալ գաղթօջախը պատմական տվյալ ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև նոր դարաշրջանի արշալույսը, եղել է ողջ հայության տնտեսական, քաղաքական, տեսական-գաղափարական, գիտական ու մշակութային կյանքի ամենակարևոր կենտրոնը, որտեղ և ընթացել են Հովհաննես Մրքուզ Ջուղայեցու արգասավոր կյանքն ու բազմաբնույթ գործունեությունը:

Ջուղաֆայ գաղթօջախի դերն ու նշանակությունը հասկանալու համար հեղինակը ելակետ է ընդունում այն իրողությունը, որ սկսած 17-րդ դարի առաջին տասնամյակներից պատմության թատերաբեմ է բարձրանում միջազգային տարանցիկ առևտրով զբաղվող հայ «խոջալական» դասը, որի գործունեությունը մինչ այդ մասամբ խամրել էր Առաջավոր Ասիայում տեղի ունեցած ռազմաքաղաքական վայրիվերումների, առևտրական նահապարհների խիստ վտանգվածության և մի շարք այլ պատճառներով: Այն հանգամանքը, որ 17-րդ դարում լայն թափ ստացած հայ առևտրական կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացը առավելապես տեղի էր ունենում ոչ թե բուն Հայաստանում, այլ նրա սահմաններից դուրս՝ առաջին հերթին Նոր Ջուղայում, պայմանավորեց համահայկական կյանքում Նոր Ջուղայի գլխավոր դերակատարությունը: Ուստի պատահական չէ, որ 17-18-րդ դարերում Նոր Ջուղան համահայկական կյանքում ձեռք է բերում միահեծան դիրք՝ տոն ու ընթացք տալով մայր հայրենիքի «քաղաքական, գաղափարական ու գիտամշակութային գործու-

նեությանը»: Հիրավի, 17-րդ դարի առաջին տասնամյակներից համահայկական նշանակություն ունեցող գրեթե բոլոր հարցերը լուծվում էին ջուղայեցիների գիտության ու կամքով:

Ահա այսպիսի միջավայրում բազմաբնույթ բուն գործունեություն է ծավալել Հովհաննես Մրքուզ Ջուղայեցին, որին Հ. Միրզոյանն իրավացիորեն ներկայացնում է իբրև իր դարաշրջանի ոչ միայն իրանահայության, այլև ընդհանրապես հայության գաղափարական առաջնորդ: Եվ դա նա հիմնավորում է այն բանով, որ 17-րդ դարավերջին և 18-րդ դարասկզբին հենց ջուղահայերն էին տեսականորեն և գործնականում ղեկավարում կաթոլիկ քարոզիչների և մահմեդական հոգևորականության՝ հայ ժողովրդին դավանափոխելու կամ կրոնափոխելու բացահայտ ոտնձգությունների դեմ մղվող պայքարը՝ դրանով իսկ պաշտպանելով հայ առաքելական եկեղեցու սկզբունքներն ու իրավունքները, կամ, որ «միևնույն է, իրանահայության դավանանքի ազատությունը, հետևաբար և ինքնուրույն գոյության իրավունքը»:

Հայտնի է, որ Սեֆյան հարստության մայրամուտին առժամանակ ուժեղացել էր պարսից իշխանությունների ու շիիթական հոգևորականության կրոնական անհանդուրժողականությունը այլադավանների և առաջին հերթին քրիստոնյա հայերի նկատմամբ: Այսուհանդերձ իրանում գործող յուրահատուկ «իսլամական դեմոկրատիզմը» հնարավորություն էր տալիս, որ հպատակ ժողովրդի հոգևորականը հրապարակային բանավեճի մեջ մտնի անգամ իսկ պարսից շահի հետ: Այս դեպքում ևս առաջամարտիկի դերում հանդես է գալիս Հովհաննես Մրքուզ Ջուղայեցին, որը մահվան սարսափը սրտում բանավիճում է Սուլեյման և Սուլթան Հուսեյն շահերի հետ ու կարողանում հասկացնել նրանց, որ թե քրիստոնյաները և թե մահմեդականները միաստվածության հետևորդներ են, այսինքն՝ «պաշտում են աստվածային միևնույն էությունը: Ուստի կարիք չկա արտաքին ու ձևական տարբերությունների համար հալածել ու բռնադատել հայերին»: Ոչ պակաս հետաքրքրական է այն փաստը, որ պարտություն կրելով «թագաւորաց աստուածաբան» ու

«տիեզերալույս փիլիսոփա» պատվանունը կրող Հովհաննես Ջուղայեցուց՝ հիշյալ շահերը ոչ միայն էապես մեղմացնում են հայերի կրոնական հալածանքը, այլև այդ մասին արձակում են հատուկ հրամաններ, որոնք, իրանում գործող կարգի համաձայն, հարգվելու էին նաև հաջորդ շահերի կողմից:

Ուշագրավ է Հ. Միրզոյանի այն հարցադրումը, որ «Հովհաննես Ջուղայեցին, սերելով արհեստավորական դասից, իր հասարակական-քաղաքական հայացքներով հանդես էր գալիս որպես երրորդ դասի գաղափարախոս»: Ըստ այդմ, վերին աստիճանի հետաքրքրական են նրա հայացքները աշխարհիկ իշխանության ծագման, նրա դերի ու խնդիրների, իշխողների ու իշխվողների փոխհարաբերության, պաշտոնյայի իրավունքների ու պարտականությունների հարաբերակցության և համանման այլ հարցերի մասին: Օրինակ, պաշտպանելով աշխարհիկ իշխանության աստվածային ծագման կրոնաաստվածաբանական տեսակետը, դրան տալիս է նոր, էությունը ու ոգով բուրժուական բացատրություն՝ գտնելով, որ իշխաններն ու դատավորները կոչված են ոչ թե բռնաճալու հասարակության վրա, ոչ թե ճնշելու և շահագործելու նրան, այլ «գի ցաւս և զհիւանդութիւնս աստուածական դատաստանեաւ բարձցեն և յայտնաբանիչք լինիցին աստուածային իրանացն և արդարութեան»:

Մենագրության հեղինակը, ի թիվս այլ հարցերի, անդրադառնում է նաև 17-18-րդ սահմանագծում Նոր Ջուղայում ծայրաստիճան սրված միարարական և հակամիարարական պայքարին՝ լուսաբանելու համար նրանում Հովհաննես Ջուղայեցու խաղացած բացառիկ դերը: Մեր կարծիքով նպատակահարմար կլինեք այս խնդիրն արծարծել քիչ ավելի մանրամասն: Ընդհատ է հեղինակը նույնպես զգացել է, որ այդ խնդիրը կարիք ունի հանգամանալից քննության, բայց հաշվի առնելով, որ դրա տարբեր ասպեկտներին անդրադարձել է իր նախորդ մենագրությամբ, չի ցանկացել «նորից ծանրանալ դրանց վրա», բայց դրանից պակասը չի լրացվել: Բանն այն է, որ նախ՝ հիշյալ մենագրությունը լույս է տեսել շուրջ երկու տասնամյակ առաջ (Երևան, 1983), և երկրորդ՝ այնտեղ բացահայտված չէ այդ պայքարի

քաղաքական երեսը: Մինչդեռ 17-րդ դարում, երբ եվրոպական տերությունների գաղութային քաղաքականությունը վերելք էր ապրում, բուրժուազիան դիմեց բազմապիսի մեթոդների. ի թիվս կապիտուլյացիոն իրավունքների, առևտրական ու տնտեսական զանազան պայմանագրերի, լայն տեղ էր տրվում նաև կրոնական քարոզչությանը: Ահա թե ինչու Հոռոմի սենտուն ուշադրության առարկա դարձավ նաև Սեֆյան իրանը, որտեղ քրիստոնյա բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը: Իսկ քանի որ Նոր Ջուղան, ինչպես ասվեց, տոն ու ընթացք էր տալիս համահայկական գործերին, բնականաբար հենց Նոր Ջուղան էլ դառնում է այդ պայքարի կիզակետը: Ինքնին հասկանալի է, որ մեթոդների միջև խրտությունն չդնող կաթոլիկ միսիոներներին համարժեք ձևով հակադրվելու համար հայ հոգևորականությունը նույնպես դիմում էր պայքարի ամենատարբեր ձևերի ու մեթոդների՝ ընդհուպ մինչև հրապարակային բանադրությունն ու զեղվքը: Լեռնի այն միտքը, թե «քարոզիչների դեմ կոպելու անհրաժեշտությունը ստիպեց հայ կղերականներին գրքեր շարադրել», լավագույնս հաստատվում է 17-րդ դարավերջում Նոր Ջուղայի տպարանի արտադրանքով: Հենց այդ նպատակով այստեղ տպագրվել են Հովհաննես Աղեքսանդր, Ստեփանոս Ջուղայեցիների կրոնադավանաբանական աշխատությունները, որոնց մի մասը հետագայում ուրիշ տպարաններում ունեցել է մեկ և ավելի վերատպություն:

Այս գլխում առաջին անգամ հանգամանորեն ներկայացվում է նաև Հովհաննես Ջուղայեցու մատենագրական հարուստ ժառանգությունը: Այդ նպատակով Հ. Միրզոյանի կատարած բարեխիղճ աշխատանքը միանշանակ արժանի է հատուկ դրվատանքի, որովհետև նախ՝ Ջուղայեցու գրչին պատկանող երկերը գտնվում են աշխարհի տարբեր պահոցներում ու ձեռագրատներում, երկրորդ՝ բազմաթիվ գործեր զոհ են գնացել ամենակոպ ժամանակին, երրորդ՝ ատելությամբ լրցված գաղափարական հակառակորդներն այրել են նրա առանձին աշխատություններ: Վերջապես չորրորդ՝ բացառված չէ, որ առանձին գործեր թեև պահպանվել են,

բայց մնում են անհայտության մեջ: Այս ամենից բացի կար մեկ այլ դժվարություն: Դա այն է, որ ինչպես Հովհաննես Ջուղայեցու կյանքն ու գործը, այնպես էլ նրա տեսական ժառանգությունը դեռ կենդանության ժամանակ արժանացել են հակասական ու իրարամերժ գնահատության, որը ավանդույթի ուժով շարունակվել է նաև հետագայում: Ասել է թե այդ ամենը հաղթահարելու, պատմական ճշմարտությունը վերականգնելու, այսինքն՝ Հովհաննես Ջուղայեցու բարդ ու հակասական, բայց և ամբողջական ու լուսավոր դիմագիծը վերականգնելու հավակնող գիտնականը պետք է կատարեր ինչպես զննական-հավաքչական, այնպես էլ քննական-վերլուծական մեծածավալ աշխատանք, որը Հ. Միրզոյանը կարողացել է իրականացնել մեծագույն նվիրումով ու արդի հայագիտությանը պատիվ բերող գիտական բարձր մակարդակով: Չենք կարող չնշել հատկապես այն հանգամանքը, որ Հ. Միրզոյանն ամեն կերպ փորձում է ցույց տալ Հովհաննես Ջուղայեցու ազդեցությունը իր ժամանակի ու հետագա դարերի հայ գիտական մտքի վրա: Այդ տեսակետից առանձնապես ուշագրավ է Ջուղայեցու գլուխգործոցի՝ «Գիրք սրբազանագործութեան» երկի արժևորումը՝ որպես քրիստոնեական կրոնի բարոյափիլիսոփայական սկզբունքների և աշխարհիկ առաջավոր գաղափարների յուրատեսակ համադրություն: Միանգամայն համաձայն ենք Հ. Միրզոյանի այն թարմ ու արժեքավոր մեկնաբանմանը, որ Ջուղայեցու այս երկը «գաղափարական ակունք է ծառայել 18-րդ դարի հնդկահայ լուսավորիչների շատերի համար»: Դրանով իսկ Հ. Միրզոյանը վերանայում է հնդկահայ լուսավորականության գաղափարական ակունքների մասին հայագիտության մեջ առկա տեսակետը:

Հովհաննես Ջուղայեցու մատենագրական ժառանգության մանրակրկիտ ուսումնասիրությունը Հ. Միրզոյանին բերել է այն համոզման, որ, օգտվելով պարսկաարաբական միջնադարյան փիլիսոփայության և հատկապես տրամաբանական մտքի նվաճումներից, Հովհաննես Ջուղայեցին նոր գաղափարներ է ներմուծել հայ մտածողության մեջ և իր հերթին «ազդել է

ոչ միայն հայ, այլև մասամբ պարսից փիլիսոփայական մտքի զարգացման հետագա ընթացքի վրա»:

Գրախոսվող մենագրության հաջորդ գլուխներում վերլուծվում են Հովհաննես Ջուղայեցու հասարակական-քաղաքական, գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական ու արվեստաբանական ըմբռումները: Նպատակ չունենալով մեկ առ մեկ ներկայացնելու դրանք, սենք միայն, որ դրանց ընթերցումը անվերապահորեն հանգեցնում է այն անխախտ համոզման, որ հանձին Հովհաննես Մրքուզ Ջուղայեցու՝ նոր շրջանի հայ փիլիսոփայական մտքի ձևավորման փուլում մենք գործ ունենք Քիրավի հսկա մտածողի հետ, որը շարունակում ու զարգացնում է միջնադարյան հայ փիլիսոփայության լավագույն ավանդույթները, և տեսական-գաղափարական հիմք է ստեղծում նոր շրջանի հայ լուսավորականության փիլիսոփայության համար:

Մենագրության վերջին գլուխը, որ նվիրված է Հովհաննես Ջուղայեցու արվեստաբանական հայացքների վերլուծությանը, գրքի ամենաուշագրավ հատվածներից է: Պարզվում է, որ իբրև գեղանկարչական փայլուն կարողություններով օժտված անհատականություն, դեռ կենդանության ժամանակ Ջուղայեցին թե հայ և թե պարսից արվեստասեր շրջաններում վայելել է մեծ գեղանկարչի համբավ, իսկ հետագա սերունդները նրա մասին արտահայտվել են հիացմունքով ու դրվատանքով: Նույնիսկ ներկայիս պարսիկ արվեստաբաններից շատերը խոստովանում են, որ Հովհաննես Մրքուզի գեղանկարչական արվեստը դրական ազդեցություն է ունեցել պանթեիստական թեմաներով պարսկական գեղանկարչության վրա: Այս դեպքում Հ. Միրզոյանն անհամեմատ ավելի քիչ նյութ է ունեցել (դա խոստովանում է և ինքը, տե՛ս էջ 194), քան մյուս գլուխները շարադրելիս, որովհետև ամենակույ ժամանակից առաջին հերթին տուժել է նրա գեղարվեստական ու գեղագիտական ժառանգությունը: Այսուհանդերձ, շնորհիվ Հ. Միրզոյանի ներկա մենագրության, Հովհաննես Ջուղայեցին իր պատվավոր տեղն է գրավում նաև 17-րդ դարում Նոր Ջուղայում ձևավորված հայ գեղանկարչական դպրոցի այնպիսի ներկայացուցիչների շարքում, ինչպիսիք են

Մինաս Ծաղկողը, Միքայելը, Հակոբջանը, Բոզդան Սալթանովը և ուրիշներ:

Անշուշտ, գրքում կան նաև այնպիսի հարցադրումներ, որոնք վիճելի են կամ կարիք ունեն լրացուցիչ հիմնավորման: Օրինակ, վկայակոչելով այն փաստը, որ Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիները 1702 թ. Ամստերդամում հրատարակած «Բնաբանութիւն իմաստասիրական կամ տարերաբանութիւն...» գրքում հայ ընթերցողին, ի թիվս այլևայլ գիտելիքների, սովորեցնում էին նաև ժամանակի հրազենի տեսակների համար վառող պատրաստելու եղանակը, Հ. Միրզոյանն անում է շատ հեռու գնացող եզրահանգում. «Դրանով իսկ Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիները, իմ խորին համոզմամբ, կամեցել են հայ ընթերցողին լռելյայն հասկացնել, որ ինչքան էլ մեծ ու իրական լինի օտարի լծից ազատագրվելու համար ակնկալվող արտաքին օգնությունը, այնուամենայնիվ քաղաքական ազատությունը ձեռք է բերվում ամենից առաջ սեփական զենքով: Իսկ վերջինս գործադրելու համար ամեն ոք պետք է իմանա ամենակարևոր բանը՝ վառող պատրաստելու եղանակը: Ավա՛ղ, Վանանդեցիների այս հանճարեղ գաղափարը հետագա ծավալում ու զարգացում չստացավ, որի համար մեր ժողովուրդը շատ թանկ վճարեց և դեռ այսօր էլ շարունակում է վճարել...» (էջ 31):

Դժվար է համաձայնել այս եզրակացության հետ, որովհետև հայտնի է, որ 17-18-րդ դարերում հրատարակվում էին աշխարհագրական, տոմարագիտական, չափի ու կշիռների, տարբեր երկրներում շրջանառող դրամական միավորների, վաճառվող ապրանքների որակի ու գնի մասին բազմաթիվ ձեռնարկներ, որոնց նպատակն էր օգնել հայ վաճառականներին առևտրական գործունեություն ծավալելու համար: Այդ տեսակետից պետք է գնահատել նաև վառող պատրաստելու եղանակը սովորեցնելու Վանանդեցիների դիտավորությունը, որովհետև ցամաքային տարանցիկ առևտրով զբաղվող հայ վաճառականները (և ոչ միայն հայ) քարավանների անվտանգությունն ապահովելու համար ստեղծել էին պաշտպանական մի ամբողջ համակարգ, որտեղ, անշուշտ, կարևոր դեր ունեին նաև հրազենն ու վառողը, ուստի բնավ անկարևոր չէր վառողի

պատրաստման եղանակի իմացությունը:

Կան դեպքեր, երբ հեղինակն առաջադրում է այս կամ այն հարցը, բայց ինչ-ինչ նկատառումով հանգամանորեն չի քննարկում: Օրինակ, իրավացիորեն նշելով, որ հայ խոջայական-առևտրական դասը մեծ դեր է խաղացել հայ հասարակական-քաղաքական ու գիտամշակութային կյանքում, Հ. Միրզոյանը քննադատում է այն կարծրացած տեսակետը, թե իբր հայ ժողովուրդը ի սկզբանե անտի եղել է «չարչի ու բեզիրզան»: Ի հաստատումն իր տեսակետի՝ բերում է Հակոբ Օշականի թևավոր միտքը, որ «մեր ժողովուրդը չարչի չէ, ոչ ալ պեզիրկեան, մեր ժողովուրդը քալող հողն է մեր հայրենիքի», բայց չի հիմնավորում, թե որտեղից է գալիս այդ թյուր պատկերացումը, և կամ ինչու 17-18-րդ դարերում հայերը զանգվածաբար զբաղվում էին տարանցիկ առևտրով: Կարելի է բերել համանման այլ օրինակներ և կամ շարունակել արժանիքների թվարկումը, սակայն դա չէ մեր հիմնական նպատակը, այլ գրքի արժևորումն ամբողջության մեջ վերցրած: Ուստի ամփոփելով վերը ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ պրոֆ. Հ. Միրզոյանը երկարատև ու տքնաշան աշխատանքով կարողացել է հանգամանորեն ուսումնասիրել 17-18-րդ դարերի ականավոր մտածող Հովհաննես Մրքուզ Ջուցայեցու ապրած ժամանակաշրջանը, կյանքը, գործունեությունն ու մատենագրական ժառանգությունը, շրջանառության մեջ դնել բազմաթիվ նոր սկզբնադրյուրներ ու փաստեր և այդ ամենի քննական վերլուծության միջոցով վերականգնել նոր շրջանի հայ փիլիսոփայական մտքի կարկառուն ներկայացուցչի, մեծ հայրենասերի ու մշակութային բազմաբեղուն գործչի հիրավի լուսավոր կերպարը, որոշել նրա տեղն ու դերը հայ, մասամբ և համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Ահա թե ինչու անվարան կարող ենք ասել, որ Հ. Միրզոյանի «Հովհաննես Մրքուզ Ջուցայեցի» մենագրությունը, լինելով հայագիտության բնագավառում վերջին տարիների ակնառու նվաճումներից, կարևոր ներդրում է ոչ միայն հայ փիլիսոփայության, այլև ընդհանրապես մշակույթի պատմության ուսումնասիրության ասպարեզում:

Վ. Ա. ԱՆՏՈՒՐՆԱՆ